

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ «ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻՒ» ՈՒՂԵԳԾՈՒՄՆԵՐԸ

Ռ. ՍԱՐԻՆՅԱՆ

Սոցիալ-տնտեսական զարգացումը XIX դ. 70-ական թթ. առանձնապես սուր բնույթով տվեց հասարակական հոսանքների գաղափարական դիրքորոշմանը: Այդ իրողությունն առավել բացահայտ դարձավ Արծրունու «Մշակի» հայտնությամբ: Տնտեսական ու մտավոր նորոգություն ակնկալող «մտրակողական», «խնքնաքննական» նրա ուղղությունը «այնքան որոշակի էր, որ առաջադրեց գաղափարական այլ հոսանքների ձևավորման անհրաժեշտությունը» և «փաստորեն պայմանավորեց «Մեղու Հայաստանիի» վերածնունդը»¹: Այս պարագաներում արդեն, ինքնին, ուրույն հետաքրքրություն են ստանում ազգային-պահպանողական հոսանքի տնտեսական զարգացման ծրագրերը: Դեռևս 1863 թ. «Մեղու Հայաստանին» որոշ ձևակերպումներ է առաջադրում հասարակական զարգացման ուղիների վերաբերյալ: Դրվատելով կապիտալիստական տնտեսակարգը՝ թերթը գրում է, որ «մարդկության ամենից լուսավորյալ, գործունյա և բարոյապես նշանավոր ազգերը Եվրոպային մեջ են բնակում. ուստի և ամենայն մարդկային մեծագործությունները այժմ բնականապես այնտեղ պետք է կատարվին կամ այնտեղից պետք է սկիզբն առնուն. մարդկության համար ամենայն օգտավետ կարգադրությունները ու միջոցները չուրաքանչյուր այլաբնակ ազգի նյութական և բարոյական բարօրության և աշխարհային երջանկության համար իրենց աղբյուրը այնտեղ պետք է ունենան»²: «Մեղու Հայաստանին» ակտիվ քաղաքական կյանքի էր կոչում ազգը, դրա հետ առնչելով նրա բարոյական ու նյութական զարթոնքը: «Մեր ազգն էլ,— գրում է թերթը,— որ նույնպես քաղաքականապես մեռած ազգերից մեկն է, եթե կամենում է, որ բոլորովին անկասկած է, բարոյապես կենդանանալ ժամանակով, ու ազգերի շարքումը տեղ ունենալ, թե իրեն և թե մարդկության այլ մասերին պետքական ու նպաստավոր լինելու նկատմամբ, պետք է աշխատի եվրոպացոց օրինակին հետևել ամեն բանում, ջանա ծանոթանալ նոցա կյանքի հետ, այսինքն քաղաքական կացությանը... Սոցանից դուրս փրկություն չկա ոչ մի ազգի արև աշխարհում» (1863, № 1, էջ 2):

Այստեղից արդեն սկիզբ է առնում ազգի առաջադիմության վերաբերյալ նրա տարբերաց ուղղությունը: Եթե մշակականները առաջին պլանի վրա էին դնում տնտեսական վերափոխումների անհրաժեշտությունը, ապա մեղվականների ելակետը հանգում է լուսավորվելու պահանջին: Որքանով մշակականները կարևոր տեղ էին հատկացնում տնտեսական գործոնին, այնքանով մեղվականների հայեցողությունը խարխաված էր գիտակցության որոշիչ դերի գաղափարի վրա: Լուսավորվել՝ հանուն բարոյական վերածնության: Այս առումով որքան «Մշակը» արմատական էր, այնքան «Մեղու Հայաստանին» պահպանողական էր, ակնկալելով տնտեսական առաջընթացի մի դանդաղ պրոցես: Լուսավորության անհրաժեշտությունը մեղվականների կարծիքով թելադրվում էր պատմության փորձով, որպիսին պարտադրում է զարգացման ազգային ուղու առանձնահատկությունը: «Հայը, դարևոր փորձից հետո,— գրում է Պետրոս Սիմոնյանը,— զգում է, որ միայն մեկ ճանապարհ մնաց իրեն անցած հարվածների դառն հետևանքներից ազատվելու—կրթվելու ու լուսավորվելու» (1863, № 28, էջ 235):

Ազգի կրթվելու և լուսավորվելու հարցում «Մեղու Հայաստանին» մեծ տեղ էր հատկացնում ընկերակցական գործունեությունը: Սարգիս Տեր-Վարդանյանցը «Մարդս ընկերական արարած է և ընկերակալության համար ստեղծված» հողվածում, մարդկանց միջև փոխադարձ հարակցությունների անհրաժեշտությունը դիտում է որպես բնական անհրաժեշտություն, որպես հասարակության առաջադիմության նախապայման: «Եթե մարդիկ ընկերություն չունենային,— գրում է նա,— եթե իրենց մտքերը, այսինչ, այնինչ երևույթի վրա արած վճիռը, բնության իրանց վրա արած ներգործությունը, իրանց գտած զանազան գյուտերը, ուրիշին, իրանցից փոթրին, շհայտ-

¹ «Հայ նոր գրականության պատմություն», հ. 3, Եր., 1964, էջ 31:

² «Մեղու Հայաստանի», 1863, № 1, էջ 2: Այսուհետև «Մեղու Հայաստանիի» տարբերվել, համարը և էջը կնշվեն շարադրանքում, փակագծերի մեջ:

նեին, պարզ բան է, որ մարդկությունն էլ առաջ չէր գնալ և դարերն էլ գիտության կողմից զանազանություն չէին ունենալ» (1866, № 42, էջ 311): Մարդը ինչպես փորձի, այնպես էլ գիտելիքների հաջորդական փոխանցման շնորհիվ է հասել զարգացման ժամանակակից մակարդակին: Զարգացման նախորդ ժամանակաշրջանի ձեռքբերումների յուրացումը միաժամանակ մարդկության հետագա կատարելագործման, բնության զարդանիւնների բացահայտման նախապայմանն է. «Անասուններն են միայն, որ հաջորդական գործունեություն չունենին, նրանցից ամենը մեկը իրանց ցեղի գոյությունը նոր է սկսում», մինչդեռ «մարդը անգործունյա և ետ մնալու համար չէ ըստեղծված, մարդը ստեղծված է առաջ գնալու, բնության իր մեջ ցանած սերմերը աճեցնելու համար...» (ն. տ.): Եթե հասարակության անդամների ընկերակցությունը պայմանավորված է քանական մարդու ներքին ձգտմամբ, ապա, ըստ հողվածագրի, էական դեր է խաղում նաև քանական սկիզբը, որպես թե «բնությունն է դրել մարդկանց այդպիսի հանգամանքների մեջ» (ն. տ.): Ս. Տեր-Վարդանյանի՝ մարդկային հասարակության ընդհանուր ընկերակցության գաղափարը «ազգերի որպես մարդկության մասերի» և որպես «մարդկության շղթայի» առանձին օղակների իր հիմքում ելակետ ունի օրգանական գարոցի տեսությունը: Հեղինակը ազգի քարոյակական կյանքի՝ պակասությունները կապում է «ընկերության» բացակայության հետ, գտնելով, որ կիրառական երկրների առաջադիմության դրդապատճառը պետք է փնտրել մտավոր և նյութական կարողությունների՝ «ընկերության, աշխատության և միության» համագործակցության մեջ: Ըստ Ս. Տեր-Վարդանյանի քարոյակական առաջադիմությունը պայմանավորված է մտավոր կյանքի աստիճանով, վերջինս՝ ուսման ու գիտության, իսկ սա էլ իր հերթին՝ ընկերության հետ: Այս սխեման չի արտահայտում որևէ կոնկրետ պրոցես ու թեև անընդհատ վկայակոչում է կիրառական քաղաքակրթության պատմությունը, բայց այն ներկայանում է վերացական և ընդհանրական բոլոր ժողովուրդների համար:

Ըստ էության «Մեղու Հայաստանին» այն տեսակետին էր, որ քարոյակական զարգացումը հիմք է հասարակության առաջադիմության: Հենց այս առումով թերթը դրվատանքի խոսքեր է ուղղում Ռոբերտ Օուենին, ակնարկելով վերջինիս «քարոյակական կատարելագործման» նկատառումներն ու գործնական միջոցառումները: Ռոբերտ Օուենը, գրում է թերթը, «մեր դարու երևելի մարդկանցից մինն է: Նորա գլխավոր միտքը այն է, որ մարդս ծնունդն է զանազան հանգամանքների: Փոխեցեք նրա շրջակայքը, — ասում էր նա, — կփոխվի և նա, աշխարհ ելնելիս նա ոչ չար է և ոչ բարի: Այս մտքի ճշմարտությունը նա ապացուցանում էր ոչ թե միայն խոսքերով, այլև բազմատեսակ արդյունավետ գործերով» ու «թեպետ նա չկարողացավ հասնել իր նպատակին, այսինքն, բոլորովին թեթևացնել ու բարվոքել հազարավոր աղքատ մշակների կյանքը, բայց նորա գլխավոր գաղափարները մնացին և այժմ ահա մարդասեր գիտնականք ամեն տեղ աշխատում են իրագործել նրա մտքերը» (1866, № 1, էջ 4): Ակներև է, որ հեղինակը ընդհանուր տեսանկյան տակ է դնում ամբողջ կոոպերատիվ շարժումը՝ և՛ ուսուցիչական սոցիալիստներին, որոնք կոոպերատիվները համարում էին այն միջոցը, որը հնարավորություն կտար առանց հեղափոխության անցում կատարելու կապիտալիզմից սոցիալիզմին, և՛ Պրուդոնին, որը կապիտալիստական հասարակարգի շարժերը փորձում էր վերացնել ժողովրդական բանկերի միջոցով, և՛ Լասալին, որը փրկությունը տեսնում էր պետության օգնությամբ ստեղծվող արտադրական ասոցիացիաներում, և՛ գերման Շուլցե-Գեյլիին ու Ռայֆայզենին, որոնք ելքը տեսնում էին ինքնօգնության հիմունքներով կազմակերպվող արտադրական կոոպերատիվներում և այլն, և այլն:

4. Մարքսը բազմիցս շեշտել է կոոպերատիվների միջոցով կապիտալիզմի վերափոխման անհնարինությունը, այն, որ «հասարակական արտադրությունը ազատ և կոոպերատիվ աշխատանքի հսկայական ու ներդաշնակ սխտեմի վերածելու համար անհրաժեշտ են ընդհանուր սոցիալական փոփոխություններ, հասարակարգի հիմքերի փոփոխություններ, այնպիսի փոփոխություններ, որոնք կարող են ձեռք բերվել միմիայն հասարակության կազմակերպված ուժերի, այսինքն՝ պետական իշխանության, կապիտալիստներից և հողատերերից հենց իրենց արտադրողներին փոխանցվելու ուղիով»³:

Հետաքրքրակ է, որ «Մեղու Հայաստանին» Ռ. Օուենի սոցիալական ու տնտեսական զարգացման գաղափարներին ծանոթանալու համար առաջարկում է կարգալ ն. Գորբուլյուբովի «Роберт Оуэн и его попытки общественных реформ» «սիրուն հողվածք»: Հայտնի է, որ ն. Գորբուլյուբովը բարձր գնահատելով Օուենի սոցիալիստական միտումները, նրան անվանում է «համառ միամիտ»⁴ ու նշում նրա ծրագրերի իրականացման անհնարինությունը: Ծիշտ է, թերթին հետաքրքրում էր ոչ Ռ. Օուենի հասարակական վերակառուցման տեսության ռեֆորմատորական ուսուցիչական սոցիալիզմը և ոչ էլ ն. Գորբուլյուբովի հեղափոխական ուսուցիչական սոցիալիզմը,

³ К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 16, М., 1960, с. 109.

⁴ Н. А. Добролюбов, Собр. соч., т. 4, с. 31.

սակայն «Մեղու Հայաստանի» հեղինակի հայացքների վրա նկատելի էր նրանց ուսմունքում անհատի գործողությունների սոցիալական պայմանավորվածության փաստի ընդունումը, հակառակ մարդարանական ուսմունքի, որը մարդկանց հատկությունները բացատրում է նրանց բրնական ծագմամբ, առանց հաշվի առնելու հասարակական գործոնը: Ծիշտ չէ թերթի այն պնդումը, թե անգլիացի մեծ ուտոպիստի «անունը ոչ թե մեր հայերին, այլև ռուսներին շատ հայտնի չէ» (1866, № 1, էջ 4): Հայտնի է, որ արդեն անցյալ դարի 30—40-ական թթ. ռուսական առաջադիմական միտքը հատուկ ուշադրություն էր դարձնում արևմտյան ուտոպիստ սոցիալիստներին: Ցուրացնելով քննադատական ուտոպիստների սոցիալիստական ուսմունքը՝ Վ. Բելինսկին, Ա. Գերցենը, Ն. Գորբուլյուպովը, Ն. Չերնիշևսկին և մյուս հեղափոխական-դեմոկրատները այն հասցրին տեսական մի նոր աստիճանի՝ ուտոպիական սոցիալիզմի՝ առնչելով այն հեղափոխական դեմոկրատիզմի հետ:

Ինչպես արդեն նկատել ենք, «Մեղու Հայաստանին» ազգութայն պահպանության նախադրյալ էր համարում «բարոյական հարստությունը»: Այնուամենայնիվ հասարակական կյանքի տեղաշարժերը, նյութական արտադրության ոլորտի զարգացումը և դրա հետ կապված ապրանքա-փողային հարաբերությունների շրջանակների ընդլայնումը պարտադրում էր թերթին անդրադառնալու նաև այդ հարաբերությունների հատուկ կատեգորիաների վերլուծությանը: Այս տեսակետից ուշագրավ է Խ. Խաչատրյանի «Փողի ծագումը և նրա գործածությունը» հոդվածը, որն ըստ էության նվիրված է Ադամ Սմիթի «Ժողովուրդների հարստության բնույթի և պատճառների ուսումնասիրության» հայտնի աշխատության դրույթների մեկնությանը: Ինչպես և անգլիացի տնտեսագետը, Խ. Խաչատրյանը փողի պրոբլեմը քննության է ենթարկում մինչև ապրանքի և արժեքի վերլուծությունը: Մարդը իր պահանջմունքների բավարարման համար չի կարող ամեն ինչ արտադրել, ուստի արտադրելով աճելին, քան անհրաժեշտ է իր կարիքների բավարարման համար, նա հարաբերության մեջ է մտնում այլ արտադրողների հետ և արդյունքների փոխանակություն կատարում: Նման մոտեցմամբ փոխանակությունը ներկայանում է որպես մարդու՝ փոխանակվելու բնական հակվածության դրսևորման ձևը, որի հետևանքով, ինչպես Խաչատրյանը կրկնում է Սմիթին, «ամեն մարդ դառնում է մի վաճառական, իսկ բոլոր մարդիկների հասարակությունը դառնում է հատկապես առևտրական մարդիկների հասարակություն» (1871, № 10, էջ 74)⁵: Մակայն այդ պայմաններում փոխանակությունը հանգիպում է որոշակի դժվարությունների, հատկապես եթե արտադրողներից յուրաքանչյուրը մյուս արտադրանքի պահանջը չունի: Եվ հանգուցը Խ. Խաչատրյանը լուծում է հետևյալ ձևով. «Մարդիկ փորձելով այդպիսի դժվարությունները, հետևել են պահել իրենց մոտ, իրանց սեփական աշխատանքով ստացած իրերից այնպիսի մի իր, որ միշտ հարկավոր լինի մարդիկների մեծ մասին և կարելի լինի միշտ փոխել ամեն մի մարդու աշխատանքով պարտատեժ իրերի հետ» (ն. տ.): Այսպիսով փոխանակության զարգացման պրոցեսում տարեալային ձևով առաջանում են միջնորդ ապրանքներ, որոնք կատարում են փողի ֆունկցիա, ընդ որում, նշում է Խաչատրյանը, տարբեր ժողովուրդների մոտ միջնորդ ապրանքների ֆունկցիա են կատարել զենքը, անասունը, ծխախոտը, կաշին, բրինձը և այլն: Այս միջնորդ ապրանքներն էլ իրենց հերթին, կապված տեխնիկական արգելքների հետ, դժվարացնում էին փոխանակության պրոցեսները և այդ պատճառով էլ փոխանակվելու հիմնական միջոց դարձան մետաղները: Նա քննադատում է կեղծ դրամներ թողարկելու պրակտիկան, այնուհետև նշում, որ դրամահատումը աստիճանաբար դառնում է պետության գործը: Խաչատրյանի դրականը այն է, որ նա, ինչպես և Սմիթը, ընկալում էր փողի ապրանքային բնույթը: Եվ միայն այդքանը: Նա փող համարում էր լոկ փոխանակության պրոցեսն արագացնող միջոց: Կ. Մարքսը նկատում է, թե բուրժուական կլասիկ տնտեսագետները նշել են փողի ապրանքային բնույթը, մինչդեռ խնդրի մարդը դժվարություններ հենց ապրանքը փող դառնալու առեղծվածի մեջ է, որի լուծման համար անհրաժեշտ եղավ ստեղծել մի մտքողչ ուսմունք արժեքների մասին⁶:

1870-ական թթ. վերջերին և 80-ական թթ. սկզբներին «Մեղուն» տպագրում էր հոդվածներ, որոնք նվիրված էին մի կողմից նարդոնիկական, մյուս կողմից եվրոպական մանրրոքոտական սոցիալիստական գաղափարախոսության ուսմունքների մեկնարանությանը: Այդ հեղինակներից հատկապես ուշադրության արժանի են Հ. Տեր-Մովսիսյանը և Տ. Ս.՝ ն. Հ. Տեր-Մովսիսյանը կարևոր է համարում «Կովկասի և Հայաստանի ուսումնասիրությունը այս բառի լայն մտքով» (1882, № 21): Այդ խնդիրը նա համարում է օրակարգի հարց վկայակոչելով ռուս հեղինակների աշխատությունները, ինչպես Ստատկովսկու «Задачи климатологии Кавказа», Մենդելևի ելույթը՝ «Об изучении наших окраин», կարգացված Պետերբուրգի բնագետների և բժիշկների

⁵ Տե՛ս Ա. Տմիտ. Исследование о природе и причинах богатства народов, М., 1935. էջ 24:

⁶ Տե՛ս Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, էջ 89:

* Տ. Ս.՝ ն. Գ. Տեր-Մովսիսյանի է:

համաժողովում և այլն: Տեր-Մովսիսյանի կարծիքով հատկապես տնտեսական զարգացման հարցերի ուսումնասիրությունը հող կնախապատրաստի հետագա պրակտիկ գործունեության համար: Անդրադառնալով Պետրովսկու գյուղատնտեսական ակադեմիայի հայ ուսանողների խմբակում ն. Տեր-Քարսեղյանի «Համայնական հողատիրությունը» գեկուցման հիմնական դրույթներին՝ նա համաձայնում է վերջինիս այն մտքին, թե «համայնական հողատիրությունը համեմատաբար ամենակատարյալ և ամենաշահավետ հողատիրության ձևն է և ամենից ավելի է մտնում ընդհանուր համամարդկային իրավունքին» (ն. տ.), և դա այն պատճառով, լրացնում է խմբակի մի այլ անդամ՝ Գր. Յուզբաշյանը, որ «հողը բնության տուրք լինելով կատարյալ սեփականություն համարվել չի կարող» (ն. տ.): Ընդհանրապես այդ խմբակի անդամների վրա նկատելի է լիբերալ նարդոնիկական տնտեսագետների ազդեցությունը: Ինչպես նշում է Շ. Տեր-Մովսիսյանը, հայ ուսանողների խմբակում կարողացվող դասախոսությունները մի զգալի մասով էլ նպատակ էին հետամտում հայ իրականությանը հողորդակից դարձնել «նիկոլայ-Օն-ի, Գոլովաչովի, Բ. Բ.-ի և մյուսների աշխատություններին»:

Հայտնի է, որ XIX դ. 80-ական թթ. ռուսական իրականության մեջ լայն տարածում է ստանում տնտեսական ռոմանտիզմը: Այս ուղղության ներկայացուցիչները (Վ. Վորոնցով, Ն. Գանիբլ-սոն) փորձում էին ռուսական իրականության ինչ-ինչ առանձնահատկություններ հաշվի առնելով հասարակական զարգացումը ուղղել դեպի «Ժողովրդական արտադրության» հունը: Ահա հենց այդ ոգով էլ Տեր-Մովսիսյանը գրում է, թե «ես այն կարծիքին եմ, որ արհեստագործությանը կարելի է այնպիսի ուղղություն տալ, որ ապագայում արդյունագործության գործիչները (орудия производства) պատկանեն գյուղական հասարակություններին և մենք ազատված կլինենք այդպիսով եվրոպական բուրժուազիայից: Փաղաքի համքարների կազմակերպության ուսումնասիրությունն էլ նմանապես պետք է մեր գլխավոր նպատակներից մեկը լինի, որովհետև համքարությունների մեջ պահպանվում է հավասարության և ինքնօրինության բարձր գաղափարը» (ն. տ.): «Բայց եթե մեր գյուղարայքում երևային փոքրիկ-փոքրիկ գործարաններ, — գրում է նա մի այլ տեղ, — ուր մշակեն գյուղական բերքերը, այն ժամանակ գյուղատնտեսությունը ավելի շահավետ գործ կդառնար և գյուղացին երբեք չէր թողնի հայրենի երկիրը: Մի գյուղում կարելի էր մի համայնական պանրոց շինել, մյուս գյուղում մի համայնական շոգեհաղաց (общинная паровая мельница), երրորդ գյուղում մի համայնական ձիթարան, չորրորդ գյուղում մի համայնական կտավի գործարան և այլն: Այդպիսի փոքրիկ գործարանները մեծապես կնպաստեն մեր գյուղացու տնտեսական դրության բարվոքմանը»:

Վերջապես բուլրովին ուրիշ բան է բուրժուական գործարանը և համայնականը» (1882, № 48): Միանգամայն ակնհեր է, որ Տեր-Մովսիսյանի հասարակական առաջընթացի սխեման տեղադրվում է նարդոնիկների տնտեսական ուղեգծումների շրջանակներում. զարգացումն ուղղել դեպի «համայնական», «արտելային» արտադրությունը: Հայ հեղինակը չի նկատում, որ այդ մանր ձեռնարկությունները ավելի են ընդլայնում ապրանքային տնտեսությունը՝ նպաստավոր նախադրյալներ ստեղծելով կապիտալիզմի զարգացման համար: Ապրանքա-դրամական հարաբերություններն այն ուժն են, որը հետզհետե ակնհայտ է դարձնում ժողովրդական արտադրության «բնածին հիմունքների» նարդոնիկական տեսության սխալականությունը: Ֆ. Էնգելսը գրում է. «Ռուսական համայնքը ենթարկվեց նույն պրոցեսին, որը Սոլունից ոչ շատ առաջ, փողային տրեստեսությունը Աթենք թափանցելու կապակցությամբ, հասցրեց Աթենքի տոհմատիրական կարգերի քայքայմանը: Սոլունը կարող էր, ճիշտ է, այն ժամանակ դեռևս բավական երիտասարդ մասնասեփականատիրական իրավունքի մեջ հեղափոխական ներխուժման միջոցով ազատագրել ստրկացած պարտապաններին, պարզապես ոչնչացնելով նրանց պարտքերը: Բայց կյանքի վերադարձնել հին Աթենքի տոհմատիրական կարգերը՝ նա չէր կարող. և ճիշտ այդպես էլ աշխարհում շկա այնպիսի մի ուժ, որը ի վիճակի լինի վերականգնելու ռուսական համայնքը, երբ նրա քայքայման պրոցեսը հասել է որոշ աստիճանի»⁷:

2. Տեր-Մովսիսյանը գյուղացու ժանր տնտեսական և ցուցության պատճառը համարում է նրա տգիտությունը, հին արտադրաձևերին կառչած լինելը (տե՛ս 1882, № 48): Գյուղացիության տրեստեսական վիճակի բարելավման ու «կատարելագործված երկրագործության» արմատավորման գործում նա մեծ տեղ էր հատկացնում գյուղատնտեսական ինտելիգենցիայի առաքելությանը, անգիտանալով, որ ինտելիգենցիան, չէր կարող իրականացնել իր ծրագրերը, քանի որ նյութապես կախված էր հասարակության բարձր խավերից, որոնց ձեռքում կենտրոնացված էին տրեստեսական լծակները:

Շ. Տեր-Մովսիսյանը հետաքրքրական մտքեր ունի 1861 թ. ռուսական գյուղացիական առ-

⁷ «Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի նամակագրությունը ռուս քաղաքական գործիչների հետ», Եր., 1954, էջ 376:

Ֆորմի վերաբերյալ, դիտելով, որ այն իր սոցիալ-տնտեսական բովանդակությամբ շուտեց գյուղաշինարարության հարցերը՝

«Մեղու Հայաստանի» էջերում տնտեսական հարցերի քննությունն ակնկալող տեսական հոդվածներով հանդես էր գալիս Տ. Ս.-ն: Տնտեսական հարցը նա համարում էր ժամանակի ամենակարևոր հասարակական հարցը: Եվ քանի որ դրա հետ անմիջականորեն առնչվում է հասարակության դասակարգային ու սոցիալական հակասությունների լուծման խնդիրը, որ մշտապես զբաղեցրել է մարդկությանը, ուստի հասարակության պատմությունը ըստ Տ. Ս.-ի ներկայանում է որպես «տնտեսական խնդրի պատմություն» (1882, № 69): Տնտեսական ամեն մի հարց ունի որոշակի սոցիալական բովանդակություն: Այս առումով որոշակի հետաքրքրությունն են ներկայացնում սոցիալ-դարվինիզմի ուսմունքի վերաբերյալ նրա նկատողությունները: Հայտնի է, որ սոցիալ-դարվինիզմի ներկայացուցիչները փորձում էին Գարվինի տեսության սկզբունքները տարածել նաև հասարակական կյանքի վրա, ընդհանուր գծեր տեսնելով բնության էվոլյուցիոն զարգացման և հասարակական առաջընթացի միջև: Անդրադառնալով սոցիալ-դարվինիստների «գոյության կոլի» օրենքին, Տ. Ս.-ն քննադատում է բուրժուական այն տեսաբաններին, ովքեր այդ օրենքը տարածում էին նաև մարդկային հասարակության վրա և փորձում սրբագործել «այժմյան դասակարգերի բաժանումը մարդկային հասարակության մեջ, ապացուցանելով, որ անհրաժեշտ են տիրապետող և ստրուկ դասերը, որ մարդկանց մի մասը պետք է աշխատի մյուսների համար, որ համերաշխությունը չի կարող լինել մարդկանց մեջ, այլ միայն մրցումն և պատերազմ. ինչպես կենդանիների մեջ» (1882, № 42): Հեղինակը ճիշտ է ընկալել սոցիալ-դարվինիզմի սոցիալական բովանդակությունը, որի միտումն է գոյության կոլի օրենքներով բնական արդարացում տալ դասակարգային ներհակություններին, մրցակցությունը, կապիտալիստական երկրների գաղութատիրական քաղաքականությունը: Տ. Ս.-ն չէր ընդունում բիոլոգիզմը, հասարակության զարգացման շարժիչ ուժը գոյության պայքարի մեջ տեսնելու մտայնությունը, որը ոչ միայն երաշխիք չի կարող լինել հասարակության կատարելագործմանը, այլև կարող է կործանարար հետևանքներ ունենալ: Մարդկային հասարակության նրա իդեալը ենթադրում էր «համերաշխության օրենքի» գոյությունը: Մարքսիզմի դասականները մի անգամ չէ, որ անդրադարձել են սոցիալ-դարվինիզմի քննադատությանը: Ֆ. էնգելսը նկատում է, որ «միանգամայն մանկամտություն է ձգտել պատմական զարգացման ու նրա բարդացման ողջ հարուստ բազմազանությունը հանգեցնելու վտիտ ու միակողմանի՝ գոյության կոլի»՝ Ֆորմուլային: Այդ ոչինչ շանել է նշանակում կամ դրանից էլ քիչ բան»⁸:

Տ. Ս.-ն հասարակության տնտեսական կյանքի զարգացումը համարում է օրինաչափ երեւոյթ, որը սակայն ոչ միշտ է ուղեկցվում բնակչության բարեկեցության բարձրացմամբ: Դրանք կարող են գտնվել հակադարձ կապի մեջ (1882, № 73): Գործարանական արդյունաբերության զարգացումը տանում է դեպի տեղական մասն արհեստավորական արտադրության քայքայմանը: Մեքենայական արտադրության և վարձու աշխատանքի դրա հիմնված «դրամատիրական սիստեմի» արտադրությունը հնարավորություն է տալիս ավելի էժան ծախելու ապրանքները և դուրս մղելու արհեստներին: Այս առիթով Տ. Ս.-ն հետաքրքիր միտք է հայտնում, թե դրա պատճառն այն է, որ «դրամատիրական սիստեմում արհեստավորները վարձկաններ են և ստանում են իրենց աշխատանքի միայն կեսը, մի երրորդը, մի քառորդը և այլն, մինչդեռ անձնական աշխատող արհեստավորը օգտվում է իր աշխատանքի բոլոր եկամտից. վերջապես դրամատիրական սիստեմում ամեն բան կատարվում է մեծ շահով, գործը դյուրացնող թանկագին մեքենաներով, բազմաթիվ գործավորների աշխատանքը կենտրոնացած մի գործարանում և այլն, որը և տալիս է միջոց շահագրգռող աժանացնել ապրանքի գինը և մրցման ժամանակ հաղթանակ տանել» (1882, № 75): Հայտնի է, որ պարզ ապրանքային արտադրության ժամանակ բացակայում էր շահագործումը, քանի որ անմիջական արտադրողն ու արտադրության միջոցների սեփականատերը նույն անձնավորությունն էր: Տ. Ս.-ն կարծես կռահում է այն երևույթը, որ մասն ապրանքարտադրողների արտադրության ծախսերը ներկայացնում են ամբողջ աշխատանքի ծախսումները, այսինքն համընկնում են ապրանքների արժեքին, իսկ կապիտալիզմի պայմաններում արտադրության ծախսերին գումարվում է նաև վարձու բանվորների կողմից ստեղծված հավելյալ արժեքը, չնայած այդ հասկացությունները նա չի օգտագործում: Նա իրավացիորեն նշում է, որ մեքենայական, կոոպերացված աշխատանքը տանում է աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, հետևապես նաև ապրանքի միավոր էժանացմանը, իսկ դա կարևոր նախադրյալ է ապրանքարտադրողների մրցակցային պայքարում հաղթանակ տանելու համար:

⁸ Այդ մասին տե՛ս Վ. Ռյաունի, Հայ հասարակական հասանքների պատմությունից, Եր., 1936, էջ 394—398:

⁹ Ֆ. էնգելս, Բնության դիալեկտիկա, Եր., 1950, էջ 648:

Տ. Ա.-ն տարբեր առիթներով անդրադարձել է կապիտալիստական մեքենայական արտադրութեան տնտեսական հետեանքների բացահայտմանը: Ընդհանրապես, նշում է նա, մեքենաները կոչված են «մարդկային աշխատանքը թեթևացնելու և շատ անգամ մեր անձնական ուժերի համար անկարելի կարելի դարձնելու համար» (1882, № 77): Բայց այդպե՛ս է կապիտալիստական արտադրութեան պայմաններում և «թեթևացա՞ն այդ ամենամեծ դասի թշվառութունները»: Մեքենայի առաջին «բարեմասնութիւնը» բանվորների համար, դա «առանց աշխատանքի՝ պարապ մնալու առաջարկութիւնն է», հսկայական զանգվածների մատնելով գործազրկութեան և քաղցածութեան: Անգլիայի տնտեսական զարգացման պատմութիւնը այդպիսի սխուր շատ ունի: Ընդհանրապէս մըցում են բանվորների հետ, վերջիններիս դարձնելով նրանց կցորդներն ու՝ թըշնամիները, հանգամանք, որ ստիգծում է սուր ներհակութիւն արտադրողի և արտադրութեան միջոցների միջև:

4. Մարբըր նկատում է, թէ «մեքենան մտցնելու ժամանակից է, որ բանվորն սկսում է պայքարել աշխատանքի բուն միջոցի դեմ, կապիտալի գոյութեան այդ նյութական ձևի դեմ: Նա բնութաւանդում է արտադրութեան միջոցների այս որոշ ձևի՝ որպիս արտադրութեան կապիտալիստական եղանակի նյութական հիմքի դեմ»¹⁰:

Եթէ մի կողմից Տ. Ա.-ն արդարացնում էր բանվորների այդ արարքը որպէս վարձկանների, ապա մյուս կողմից՝ համարում էր «տղեւ ու կարճատես»: Մեքենաները բանվորներին դարձնում են վարձկաններ և «ամբողջ դասակարգի պատկանած եկամուտը խլում է և լցվում մեկի կամ երկուսի գրպանը: Փոխանակ աշխատութեան ժամերը կրճատելու, ստիպում է վարձկաններին փոխնիփոխի դօր և գիշեր աշխատել, որովհետև այդպէս է պահանջում մասնավոր տիրոջ շահը» (1882, № 77): Հայտնի է, որ բուրժուազիան կանգնելով բանվոր դասակարգի հեղափոխական ուժին դեմ հանդիման, աշխատավորներին որոշ զիջումներ արեց, մտցնելով աշխատանքային օրը կարգավորող որոշ օրենքներ: Սակայն, ինչպէս նկատում է Տ. Ա.-ն, դրանք չէին կարող վերացնել շարիքները: Նա մեքենայական արտադրութեան բացասական հետեանքներից է համարում գործազրկութիւնը: Ակնարկելով տնտեսական ճգնաժամերի փաստը, նա նշում է, որ թեև մեքենաները կոչված են էժանացնելու ապրանքները, բայց «ապրանքների էժանութիւնը ընդհանրապէս ասած, ուղիղ հարաբերական է գործավորների օրավարձին», երբ ապրանքների գինն էժանանում է, արտադրութիւնը կրճատվում է և բանվորների մի մասը «բարձակվում» են աշխատանքից, իսկ մյուս մասն էլ «ստիպված են լինում պակաս վարձով ծառայել, ապա թե ոչ շատերը կան այդ պայմանն հանձն առնելու պատրաստ» (1882, № 78): Եթէ տվյալ ապրանքի նկատմամբ մեծանում է հասարակական պահանջարկը, ապա արտադրութիւնն ընդլայնվում է, և եթէ որոշ շահով բարձրանում է օրավարձը, ապա թանկացած ապրանքներ գնելիս այն նորից վերադառնում է կապիտալիստներին, «այս նշանակում է աղով ստանալ, ձախով տալ» (ն. տ.):

Մեքենաներն ընդհանրապես կոչված են հասարակութեան համար օգտակար լինելու ոչ միայն «բանական», այլև «որակական» առումով, բայց այն շարիք է դառնում կապիտալիզմի պայմաններում: Տ. Ա.-ն հիշում է նշում, որ մեքենամ մրցութիւն է առաջ բերում բանվորների միջև, կամ որակավորում շունչող բանվորներին փոխարինում են որակյալ բանվորները, կամ վերջիններս աշխատում են առաջինների օրավարձով, կամ կիրառվում են կանանց ու անշահահասների էժան վարձատրվող աշխատանքը: Փաստորեն Տ. Ա.-ն նկատում է այն երևույթը, որ մեքենան նպաստելով աշխատանքի արտադրողականութեան հսկայական բարձրացմանը, առաջ է բերում մրցութիւն ու գործազրկութիւն, որի հետեանքով իջնում է աշխատավարձը աշխատուժի արժեքից: Եվ հեղինակը նկարագրում է բանվորների՝ ծանր աշխատանքը կապիտալիստական գործարաններում: Տ. Ա.-ի հիշատակած դիտողութիւնների վրա նկատելի են սոցիալիստական ուսմունքների ազդեցութիւնը, սակայն սոցիալական հարցի լուծման նրա ծրագիրը իր էութեամբ մանրբուրժուական էր և ուժմտեղի: Նա դատապարտում էր արեւմտյան կարգերի պատմական գոյութեան իրավունքը: «Զգուշանալ արեւմուտքի սխալներից.— գրում է Տ. Ա.-ն,— որոնք հուժկու տատանմունքների և ներքին խռովահույզ պատերազմների պատճառ են լինում: Հասկանանք, որ մեզ ոչ թէ մեքենաներ, այլ մեքենաների հասարակութեան մեծամասնութեան համար օգտակար գործածութիւնն է հարկավոր» (ն. տ.): Ուստի և նա կովկասի համար առաջադրում էր զարգացման մի այնպիսի ուղի, որը մի տեսակ համատեղում է արտադրութեան ավատական ու բուրժուական արտադրաձևերի տարրերը: Վերանում են հին արտադրաձևերը «իրենց հետ թաղելով միջնադարյան, թեև շատ պակասավոր, բայց անկախ սիստեմը և տեղի տալով նոր, բայց ավելի վտանգավոր սիստեմի, և մեզ պետք է այդ երկու սիստեմների ուսումնասիրութիւնն էլ, որպէսզի բանի հարմար ժամանակ ունիք, ընտրենք մի ուրիշ.— երբորդ սիստեմ, որը կարողանա մրցել նոր սիստեմի դեմ և շունենա այդ նորի պակասութիւնները» (1882, № 75): Իսկ

¹⁰ 4. Մարբու, Կապիտալ, հ. 1, Եր., 1954, էջ 449:

այդ երկու սխտեմները կարելի է զուգորդել, պահպանելով «առաջին սխտեմի (դրամատիրական—Ռ. Ս.) ձևը գործի ժամանակ, երկրորդի ձևը (անձնական—Ռ. Ս.) աշխատանք (արդյունք) բաժանելիս» (1882, № 91)։ Տ. Ս.-ն նկատում էր կապիտալիստական արտադրության և բաշխման միջև հակասությունը, որը և փորձում է լուծել իր առաջադրած «երրորդ սխտեմի» միջոցով, դրանով իսկ արտադրությունը եթեարկելով հասարակական շահին։ Նա հիշեցնում է մանր բուրժուական տնտեսագետ Սիամոնդուն, որը հասարակական դժբախտությունների պատճառը տեսնում էր ոչ միայն մեքենաների կատարելագործման, այլև ստեղծված արդյունքների անարդարացի բաշխման մեջ։ Այստեղից էլ բաշխման հարաբերությունների կատարելագործման անհրաժեշտությունը։

Տ. Ս.-ն չէր պատկերացնում բուրժուական հարաբերությունների ձևավորման մեխանիզմը, խոշոր մեքենայական արտադրության և մանր արտադրության փոխադարձ կապը, որպես ապրանքային տնտեսության տարբեր ձևերի։ Վ. Ի. Լենինը գրում է, որ «ինչպես 19-րդ դարի սկզբի եվրոպական ռոմանտիկների, այնպես էլ 19-րդ դարի վերջի ռուսական ռոմանտիկների դժբախտությունն էլ հենց այն էր, որ նրանք իրենց համար հորինում են մի իշ-որ վերացական, արտադրության հասարակական հարաբերություններից դուրս կանգնած մանր տնտեսություն և աշքաթող են անում այն փորձիկ հանգամանքը, որ այդ մանր տնտեսությունը իրականում գրտնջվում է ապրանքային արտադրության պայմաններում», ուստի և «նա չի հասկանում կապը մանր արտադրության (որը նա իդեալականացնում է) և խոշոր կապիտալի միջև (որի վրա հարձակվում է)», «նա չի տեսնում, թե ինչպես նրա սիրած մանր արտադրողը, գյուղացին, իրոք, մանր բուրժուա է դառնում»¹¹։

Իհարկե, Տ. Ս.-ն տեսնում էր մանր արտադրության պատմական գատնապարտվածությունը, բայց և միաժամանակ իր տնտեսական իդեալը որոնում է անցյալում։

4. Մարքսը և Ֆ. էնգելսը մանր բուրժուական սոցիալիզմի քնորոշ առանձնահատկություններից մեկն էլ համարում էին հենց այն, որ նա փորձում էր «արտադրության և փոխանակության ժամանակակից միջոցները բռնությամբ դարձյալ խցկել սեփականատիրության հին հարաբերությունների շրջանակների մեջ»¹²։ Եվ որքան էլ Տ. Ս.-ն վկայալուծումներ անի Սեն-Սիմոնից, մարդկային հասարակության «ոսկեդարը» տեսնելով նրա ապագա զարգացման ու կատարելագործման մեջ, որքան էլ առաջադիմական լինի բուրժուական հարաբերությունների նրա քննադատությունը, այնուամենայնիվ իր ուղեգծումներով այն դուրս չէր գալիս մանրբուրժուական տնտեսական ռոմանտիզմի շրջանակներից։ Վ. Ի. Լենինը, բացահայտելով Սիամոնդի տրտեսական ռոմանտիզմի էությունը, գրում է. «Իսկ Սիամոնդին անտեսում էր այդ զարգացումը. նրա ուտոպիան չէր կանխագուշակում ապագան, այլ վերահաստատում էր անցյալը։ Նա ոչ թե առաջ էր նայում, այլ հետ, երազելով «գաղափարեցնել հեղափոխումը»... Սիամոնդին չէր հասկանում... այն «հեղափոխման» առաջադիմական նշանակությունը, որ անցյալ դարի վերջերից սկսել էր կատարել խոշոր մեքենայական ինդուստրիան»¹³։

Այսպես ուրեմն, հասարակության տնտեսական զարգացման հարցերի մեկնությունը «Մեղու Հալախատների» տեսարանների հայացքներում, ազգային առաջընթացի տեսանկյունից՝ իր հակասություններով ու սահմանափակությամբ հանդերձ որոշակի հետադարձություն են ներկայացնում հայ տնտեսագիտական մտքի պատմության մեջ։

Р. Н. САРИНЯН — Вопросы экономического развития в газете «Мегу Айастанн». — Социально-экономическое развитие 70-х годов XIX века обусловило оживление общественных течений. Если газета «Мшак» стояла на радикальных позициях и придавала особое значение в развитии общества экономическому фактору, то «Мегу Айастанн», консервативный орган, подчеркивал особую роль просвещения. На программу экономического переустройства, проводимую «Мегу Айастанн», оказали влияние учения Р. Оуэна и Н. Добролюбова о социальной обусловленности действий личности. Критически вскрывая противоречия капиталистического производства и распределения, газета под влиянием народнических и социалистических теорий предлагала «третий» путь развития, совмещающий элементы феодальной и буржуазной форм производства, с подчинением цели производства общественному интересу. Эта программа решения социального вопроса носила по существу мелкобуржуазный и романтический характер.

¹¹ Վ. Ի. Լենին, ԵՎԺ, հ. 2, էջ 267—269։

¹² Կ. Մարքս և Ֆ. էնգելս, Հետիւր երկեր, հ. 1, Եր., 1972, էջ 168։

¹³ Վ. Ի. Լենին, ԵՎԺ, հ. 2, էջ 301։